ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԶԵՐԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

03.07.2024 20:21

Հարգելի՛ փաստաբաններ,

Շիրակի, Լոռու, Արմավիրի, Արագածոտնի, Արարատի և Սյունիքի մարզերում տեղի ունենալիք մարզային համակարգողների ընտրություններին ընդառաջ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտն ամբողջացրել և խմբագրել է նշված մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների ցուցակները (ընտրողների ցուցակներ):

Ցուցակները՝ ըստ մարզերի, ներկայացվում է ստորև.

Շիրակի մարզի փաստաբանների ցուցակ,

Լոռու մարզի փաստաբանների ցուցակ,

Արմավիրի մարզի փաստաբանների ցուցակ,

Արագածոտնի մարզի փաստաբանների ցուցակ,

Արարատի մարզի փաստաբանների ցուցակ,

Սյունիքի մարզի փաստաբանների ցուցակ:

Խնդրում ենք նախապես ուսումնասիրել ցուցակները և
դրանցում անճշտություն լինելու դեպքում ամենաուշը ընտրություններից մեկ աշխատանքային օր առաջ դիմել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտ՝ անճշտությունը շտկելու համար:

Հիշեցնենք, որ
մարզի փաստաբանների ցուցակումհաշվառվում են այն փաստաբանները, որոնք՝
ա) հաշվառված են և գործունեություն են իրականացնումտվյալ մարզում, կամ բ) հաշվառված չեն տվյալ մարզում, սակայն մշտական հիմունքներով գործունեություն ենիրականացնում տվյալ մարզում:

Պալատի ընդհանուր դեպարտամենտը մարզի փաստաբանների ցուցակը կազմելիս հիմք է ընդունումփաստաբանի անձնական գործում նշված հասցեն, բացառությամբ այն դեպքի, երբ՝ տվյալ փաստաբանըկամ մարզային համակարգողը ներկայացրել է դիմում և տվյալ փաստաբանի այլ հասցեի մասին ապացույցներ:

Ստորև մարզային համակարգողների ընտրությունների անցկացման վայրը և ժամանակը՝

ըստ մարզերի.

ՄԱՐԶ	***ԺԱՄԱՆԱԿ***	***ՎԱՅՐ***
Շիրակի մարզ	08.07.2024թ. ժամը 12:00-ից 13:00	ք. Գյումրի, Անկախության հրապարակ 9
Լոռու մարզ	08.07.2024թ. ժամը 16:00-ից 17:30	ք. Վանաձոր, Մյասնիկյան 6շ., 37 տարածք
Արմավիրի մարզ	09.07.2024թ. ժամը 10:30-ից 12:00	ք. Արմավիր, Հանրապետության 28
Արագածոտնի մարզ	09.07.2024թ. ժամը 14:00-ից 15:00	ք. Աշտարակ, Ակադեմիկոս Ղափանցյան 2/4-2/5
Արարատի մարզ	12.07.2024թ. ժամը 10:00-ից 11:30	ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող., 60շ.
Սյունիքի մարզ	12.07.2024թ. ժամը 17:00-ից 18:00	ք. Կապան, Ա. Մանուկյան 1ա շենք, 19

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })